



**Երիտասարդ պատմագետների  
ասոցացիա ԶԿ-ի EduArmenia կրթական  
նախաձեռնություն**

**Ուսուցիչների պետական  
պարտադիր  
վերապատրաստման  
դասընթաց 2023**

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## ԲՆԱՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԸՄԲՈՆՄԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ

Հետազոտող ուսուցիչ՝ Ծովինար Կարեյան  
(Գավառի Գեորգի  
Մնացականյանի անվան N 7 միջնակարգ դպրոց)

ԳԱՎԱՌ 2023թ.

Բովանդակություն

Ներածություն .....3

§1. Բնապահպանական կրթության բովանդակությունը, նպատակը եւ խնդիրները կրտսեր դպրոցում .....	5
§2. Բնապահպանական վերաբերմունքի ձևավումը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի միջոցով .....	7
Եզրակացություն .....	15
Օգտագործված գրականության ցանկ .....	17

## Ներածություն

**«Բնությունը դա մի գիրք է, որը պետք է կարողանալ կարդալ և ճիշտ  
հասկանալ: Նրան սխալ հասկանալը մեծ վնաս է բերում»:**

**Մ.Նալբանդյան**

Մարդը բնության զավակն է, ապրում է բնության մեջ և բնության միջոցներով: Այդ իսկ պատճառով բնության անաղարտությունը, մանավանդ մերօրեում, չի կարող չմտահոգել մարդկությանը: Մարդը իրողջ կյանքի ընթացքում մշակում և զարգացնում է բնության բարիքները, օգտվելով նրանցից: Ինչպես մարդու կյանքն է հարատև, այնպես էլ բնության կյանքը:

Բնությունը մեզ շրջապատող նյութական աշխարհ է՝ օդը, ջուրը, հողը, լայնածավալ դաշտերը, լեռներն ու օվկիանոսները, բույսերն ու կենդանիները: Հարյուր հազարավոր սերունդներն են ապրել երկրագնդի վրա: Նրանք լավ գործեր շատ են կատարել. մշակել են դաշտերը, ընտելացրել վայրի կենդանիներ և աճեցրել բույսեր, սովորել օգտվել բնության բարիքներից, այն ծառայեցնել մարդու շահերին: Բայց երբեմն էլ հակադրվել են բնությանը՝ կտրատել, ոչնչացրել են անտառները, նպաստել հողերի էրոզիային, ցամաքեցրել գետերը, ոչնչացրել վայրի կենդանիներին ու բույսերին, շռայլել ու սպառել օգտակար հանածոները, կեղտոտել օդը, ջուրը և այլն: Մարդը մեծ մասամբ բնությունից վերցրել է՝ նրան չվերադարձնելով համարյա ոչինչ: Դրա հետևանքով բնությունն սկսել է աղքատանալ, նվազել են նրա բնական պաշարները, սկսվել է համընդհանուր դեգրադացիան:

Մարդը գնալով ավելի ու ավելի է թափանցում բնության գաղտնիքների մեջ, հայտնագործում է բնության օրենքներն ու օրինաչափությունները և դրա շնորհիվ ստեղծում բազմապիսի նորանոր արժեքներ, որոնք թեթևացնում են նրա վիճակը, բարելավում կենսամակարդակը, զարգացնում են մտածելակերպը, սակայն, ցավոք սրտի, այդ գործունեությունը շատ հաճախ զգալի վնասներ է պատճառում շրջակա միջավայրին և Երկիր մոլորակի էկոլոգիային:

Մեր հանրապետության առկա պայմաններում շրջակա միջավայրի պահպանության հարցերն առանձնապես հրատապ են: Դա պայմանավորված է հանրապետության սակավավառությամբ, ջրի պակասով, բնակչության մեծ խտությամբ, անտառային տարածությունների սահմանափակությամբ, արդյունաբերության այն ճյուղերի ինտենսիվ զարգացմամբ, որոնց

ծեռնարկություններն իրենց արտադրության թափոններով ավելի են աղտոտում շրջակա միջավայրը: Մենք ենք այդ աղտոտված ու աղտոտվող տարածությունների և շրջակա միջավայրի միակ զավակները: Այդ իսկ պատճառով հարկավոր է ձևավորել, կրթելու դաստիարակել՝ ոչ միայն հետագայում շրջակա միջավայրը չաղտոտելու, այլև արդեն իսկ աղտոտված միջավայրը մաքրելու ցանկությամբ, կարողություններով ու հմտություններով զինված սերունդ:

Բնության պահպանության գործը լավ հիմքերի վրա դնելու համար մարդը պետք է լավ ճանաչի բնությունը, նրա օրինաչափությունները: Նախ պետք է կարողանա խնայողաբար օգտագործել նրա բարիքները, կարողանա գիտականորեն մոտենալ այդ հարցին: Բնության պահպանության խնդիրը մեր հանրապետության կրթական համակարգում շատ քիչ տեղ է գրավում: Այնուամենայնիվ, էկոլոգիական դաստիարակություն անհրաժեշտ է իրականացնել, և անհրաժեշտ է սկսել փոքր հասակից:

Էկոլոգիական խնդիրներով մարդիկ հետաքրքրվում են հիմնականում զարգացած երկրներում: Աղքատ երկրում մարդու առաջնային խնդիրը իր հացի հարցը հոգալն է. բնապահպանությունը ամենավերջին հարցերից է, որ կարող է նման երկրների միջին վիճակագրական մարդուն հետաքրքրել:

Եվրոպական երկրներում անգամ փոքր երեխաները գիտեն, որ պոլիէթիլենային տոպրակը ու ընդհանրապես պլաստիկ նյութը բնության գլխավոր թշնամին են: Կամ աղբը առանձնացնելը... Էկոլոգիական կարևոր հարցերից մեկն է աղբի առանձնացումը (բուսականը՝ մի տեղ, պլաստիկը՝ մի տեղ, ապակին՝ մի տեղ և այլն): Բայց արդյոք Հայաստանի համար, որտեղ հարյուրավոր ուրիշ հրատապ հարցեր կան, աղբի առանձնացումը կարևոր խնդիր է: Իհարկե՝ ոչ: Ոչ էլ այն կարևոր էրկրի բնակիչների համար: Սա հիմնականում բխում է նրանից, որ Հայաստանի բնակչությունը չունի բնապահպանական ձևավորված կուլտուրա, ՀՀ կրթական համակարգում շատ քիչ տեղ է հատկացվում բնապահպանական վերաբերմունքի ձևավորմանը:

Սակայն հարկավոր է գիտակցել, որ բնությունը նման է մանուկի, որին խնամք է հարկավոր՝ բավականին ուշադիր և խելացի:

## **§ 1. Բնապահպանական կրթության բովանդակությունը, նպատակը և խնդիրները կրտսեր դպրոցում**

Բնական գիտությունների ուսումնական հիմնական նպատակը՝ բնության երեւոյթները, օրինաչափություններն օրենքներն իմացող, ճանաչողության մեթոդներին տիրապետող և գործնականում կիրառող, բնության ներդաշնակությունը գիտակցող, գիտական աշխարհայացք ունեցող անձի ձեւավորումն է:

Տարրական դպրոցն ավարտողը պետք է նախնական պատկերացում ունենա կենդանի և անկենդան մարմինների առանձնահատկությունների, դրանց փոխազդեցությունների, ինչպես նաեւ մարդու օրգանիզմի մասին, տարրական գաղափար ունենա շարժման, փոխազդեցության, ջերմության, լույսի, ձայնի մասին, ճանաչի իր շրջապատում տարածված կենդանիները, բույսերն ու սնկերը, տարրական գիտելիքներ ունենա մարդու և շրջակա միջավայրի և իր կյանքում բնական դերի մասին: Միաժամանակ նշվում են այն էկոլոգիական կարողություններն ու հմտությունները, որոնք պետք է ձեռք բերի կրտսեր դպրոցականը այդ բնագավառում:

Էկոլոգիական կրթության անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության և բնության հարաբերությունների հավասարակշռության խախտումով, էկոլոգիական արդի ճգնաժամով, էկոլոգիական ռացիոնալ մտածողության և էկոլոգիական մշակույթի ձեւավորման խնդիրներով, ինչպես նաեւ էկոլոգիայի, բնապահպանության բնագավառի գիտելիքների աճող պահանջներով: Ժամանակակից մարդուն կենսականորեն անհրաժեշտ է պատկերացում ունենալ ինչպես մաթեմատիկայի, ֆիզիկայի, պատմության և դպրոցական այլ առարկաների, այնպես էլ էկոլոգիայի, էկոհամակարգերի, էկոհամակարգերում մարդու տեղի և դերի, բնության պահպանության և վերարտադրման անհրաժեշտության մասին: Որքան երեխան շուտ ծանոթանա էկոլոգիական հիմնական հասկացություններին և կատեգորիաներին, այնքան ճիշտ կդասավորվեն նրա հարաբերությունները շրջակա բնական միջավայրի և իր նմանի՝ որպես բնության անքակտելի մասնիկի հետ:

Կրտսեր դպրոցականների էկոլոգիական կրթության նպատակը էկոլոգիական մտածողության սկզբնական տարրական հենքի ձեւավորումն է, որը որոշակի պարզ գիտելիքների՝ բնության օրենքների, էկոլոգիական հասկացությունների,

բնության մեջ իր տեղի գիտակցման,

բնության նկատմամբ պատասխանատվության նորմերի յուրացման,

էկոլոգիական մշակույթի, էկոլոգիական գործունեության ձեւավորման գործընթաց է:

Կրտսեր դպրոցում էկոլոգիական կրթության խնդիրներն են՝

- ուսուցման ոլորտում՝ սովորողների ծանոթացում էկոլոգիական գիտելիքների հիմունքներին, սկզբնական էկոլոգիական հասկացությունների յուրացում,
- դրդապատճառային ոլորտում՝ էկոլոգիա առարկայի նկատմամբ սովորողների հետաքրքրության, էկոլոգիական գիտելիքների պահանջմունքների զարգացում,

էկոլոգիական կրթության կարելի է որագույն սկզբունքներն են՝

- հաջորդայնությունը՝ բնության աշխարհի, մարդու աշխարհի, էկոլոգիական պարզագույն հասկացությունների վերաբերյալ գիտելիքներից շարժում դեպի ավելի բարդ, ավելի ընդարձակը,
- ինտեգրացիան՝ էկոլոգիական տարրական գիտելիքների համադրում այլ առարկաների գիտելիքներին (մաթեմատիկա, կերպարվեստ, մայրենի և այլն),
- անընդհատությունը՝ էկոլոգիական կրթության համակարգի ընդգրկում ուսուցման բոլոր մակարդակներում՝ սկսած նախադպրոցական հաստատությունից:

Տարրական դասարաններում ընդհանուր էկոլոգիական կրթության շրջանակներում շեշտը պետք է դրվի էկոլոգիական գործընթացների և երեւոյթների հետ կապված տարրական հասկացությունների ձևավորման վրա: Ելակետային էկոլոգիական հասկացությունները ձևավորվում են սովորողների էկոլոգիական գործունեության, շրջապատող բնական օբյեկտների, դրանց հատկանիշների վերաբերյալ նրանց ունեցած (կամ հաղորդվող) փաստերի հիման վրա:

## § 2. Բնապահպանական վերաբերմունքի ձևավորումը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի միջոցով

Տեխնիկայի սրընթաց զարգացմանը զուգահեռ՝ շատ կենդանի օրգանիզմների գոյությունը դրված է վտանգի տակ: Էկոլոգիական խնդիրները իրենցից մեծ վտանգ են ներկայացնում հասարակության, նրա ֆիզիկական և հոգեբանական առողջության համար: Այդ իսկ պատճառով մարդու էկոլոգիական դաստիարակությամբ հարկավոր է զբաղվել դեռևս մանկական տարիքից: Այդ դաստիարակությունը պետք է կրի ոչ թե տարերային բնույթ, այլ լինի համակարգված և հետևողական:

Տարրական դասարաններում դասավանդվող առարկաների բովանդակության մեջ, անտարակույս, ներառված են բնապահպանական կրթությանն ու դաստիարակությանը վերաբերող մի շարք խնդիրներ: Իհարկե, կրտսեր դպրոցում դասավանդվող առարկաները՝ մայրենին, կերպարվեստը, մաթեմատիկան, երգեցողությունը, բովանդակային առումով նույնպես պարունակում են էկոլոգիական տարրական գիտելիքներ: Ընդհանրապես նշված առարկաներում միջառարկայական կապերը արտահայտվում են գիտելիքների փոխներթափանցմամբ: Օրինակ՝ մայրենիի դասընթացում ներառված են բնության երեւույթների, տարվա եղանակների, բույսերի տեսակների, կենդանիների տեսակների, ծառատունկի (ինչով եւ ինչպես է կատարվում այն), բույսերին, կենդանիներին օգնելու, նրանց խնամքի մասին մի շարք ստեղծագործություններ: Սակայն այս ամենը դեռ բավական չէ երեխաների՝ բնապահպանական վերաբերմունքի ձևավորման համար:

Բնապահպանական վերաբերմունքի ձևավորումը և էկոլոգիապես կիրթ անձի դաստիարակությունը տարրական դպրոցում իրականացվում է «Ես և շրջակա աշխարհը» առարկայի միջոցով:

Այս առարկայի նպատակն է տալ գիտելիքներ և զարգացնել հմտություններ բնագիտությունից, բնապահպանությունից՝ սովորողներին մոտ զարգացնելով տրամաբանական մտածողությունը, դիտարկելու, հետազոտելու ունակությունը, եզրակացություն անելու կարողությունը:

Այս առարկայի ուսումնասիրությունը հետապնդում է մի շարք նպատակներ.

- նպաստել հասկանալու էկոլոգիայի գլոբալ խնդիրների էությունը
- զարգացնել էկոլոգիական խնդիրները լուծելու ունակություն



• դաստիարակել քաղաքացիական դիրքորոշում և պատասխանատվություն մարդկության և բնական միջավայրի նկատմամբ:

Առարկայի ուսումնասիրության միջոցով լուծում են

- կրթական
- զարգացնող
- դաստիարակչական խնդիրներ:

Ես և շրջակա աշխարհը դասընթացի ուսումնասիրման արդյունքում սովորողը պետք է՝

- Իմանա, թե ինչպես է մարդը վերափոխել շրջակա աշխարհը, նախնական գիտելիքներ ունենա մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցության և իր կյանքում բնության դերի մասին:
- Նախնական գիտելիքներ ունենա բնության աղտոտվածության, աղբի կուտակումների հետևանքների մասին:
- Կարողանա օրինակներով հիմնավորել մարդու կախվածությունը շրջակա միջավայրից:
- Կարողանա հիմնավորել բնական պաշարների ռացիոնալ օգտագործման անհրաժեշտությունը:
- Իմանա կենցաղային թափոնների երկրորդային մշակման մասին: Կարողանա մեկնաբանել, թե ինչպես բնահամակարգերում որևէ օղակին հասցրած վնասը կարող է խաթարել ողջ համակարգը:
- Մեկնաբանի, թե ինչպես է մարդու գործունեությունն ազդում բնության վրա:
- Իմանա պահպանության կարիք ունեցող բույսերի ու կենդանիների մասին, Կարմիր գրքերի մասին
- Կարողանա մեկնաբանել բնության հանդեպ իր և ուրիշների արարքների հնարավոր հետևանքները, հասկանա շրջակա միջավայրի աղտոտվածության հասցրած վնասը բնությանը:
- Իմանա, թե ինչպես է մարդն օգտագործում գետերի, լճերի, ծովերի և օվկիանոսների հարստությունները: Կարողանա բացատրել, թե ինչու է աղտոտված ջուրը վնասակար մարդու և կենդանիների համար:
- Գաղափար ունենա մարդկանց, բույսերի ու կենդանիների համար ջրի նշանակության, երկրագնդի վրա քաղցրահամ ջրի պաշարների սահմանափակության մասին: Կարողանա օրինակներ բերել կենցաղում ջրի խնայողական օգտագործման վերաբերյալ, տանը հետևել ջրաչափի ցուցմունքներին:

- Իմանա, թե ինչ է պետք անել գետերի, լճերի, մաքրության պահպանության համար:
- Գաղափար ունենա հողի, նրա կազմի մասին: Իմանա հողի նշանակությունը բույսերի և այլ կենդանի օրգանիզմների համար: Իմանա, թե ինչ է հողերի քայքայման երևույթը:
- Կարողանա մեկնաբանություններ անել հողի գլխավոր հատկանիշի՝բերրիության (բերքատվության) վերաբերյալ, մասնակցի հողի քայքայման դեմ պայքարի փոքրիկ միջոցառումների:
- Գիտակցի մարդու տնտեսական գործունեության ազդեցությունը բնության վրա:

Ես և շրջակա աշխարհը դասընթացի ուսումնասիրման արդյունքում սովորողը պետք է՝

- հետաքրքրասիրություն հանդես բերի աշխարհի նկատմամբ՝ իրողջ բազմազանությամբ,
- հոգատար լինի կենդանի էակների հանդեպ,
- գիտակցի բնական պաշարների սահմանափակ լինելը, խնայողական վերաբերմունք ունենա բնական պաշարների հանդեպ,
- սիրի բնությունը, գնահատի նրա գեղեցկությունը,
- պատասխանատու վարքագիծ ունենա բնության հանդեպ,
- սիրի հայրենիքը, պատասխանատու վարքագիծ ունենա հայրենիքի հանդեպ:

Ավագ դպրոցականների էկոլոգիական գիտելիքների ձևավորումը իրականացվում է կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա և աշխարհագրություն առարկաների դասընթացների միջոցով:

Գաղտնիք չէ, որ ոչ բոլոր սովորողներն են սիրում նշված առարկաները և էկոլոգիական տեղեկատվություն կրող նյութերի նկատմամբ նրանց ցածր հետաքրքրությունը բացատրվում է ոչ միայն նրանով, որ այն չի համապատասխանում սովորողների հոգեկան պահանջմունքներին, այլ նաև նրանով, որ այդ նյութերը ուսուցիչների կողմից մատուցվում են ձևական, առանց հատուկ շեշտվածության և նպատակաուղղվածության: Այդ պատճառով էլ ավագ դպրոցականների էկոլոգիական գրագիտության հիմնական բովանդակությունը կազմում են միայն բնության վրա մարդու բացասական ազդեցության վերաբերյալ գիտելիքները:

Տարրական դպրոցում բնապահպանական գիտելիքների ձևավորումն իրականացվում է հիմնականում «Ես և շրջակա աշխարհը» առարկայի միջոցով: Դասընթացում արտացոլվում են բնապահպանական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ մշակման ենթակա հողի ու քաղցրահամ ջրի, բնական պաշարների սակավությունը երկրագնդի վրա, օդի աղտոտումը, կենդանական ու բուսական աշխարհի մի շարք ներկայացուցիչների վերացման եզրին գտնվելը, մարդու գործունեության արդյունքում բնության վատթարացումը, աղբագոյացման խնդիրը և աղբի երկրորդական վերամշակումը, մարդու դերը բնության պահպանության հարցում, երկրագնդի բնությունը փրկելու ուղիների որոնում և այլն: Ինչպես տեսնում ենք, դասընթացը ներառում է բնապահպանական լուրջ խնդիրներ և, առաջին հայացքից, դրանց ուսուցումը բարդ ու ձանձրալի է թվում տարրական դասարանների երեխաների համար: Սակայն այս թեմաների ուսուցումը դառնում է թեթև, հետաքրքիր ու զվարճալի, երբ դա կազմակերպվում է ոչ թե դասախոսության մեթոդով, այլ հետաքրքրաշարժ փորձերի, համագործակցային մեթոդների, դիդակտիկ ու շարժուն խաղերի կիրառմամբ, ուսուցողական ֆիլմերի ու մուլտֆիլմերի դիտմամբ, դիտողական արշավների կազմակերպմամբ:



Օրինակ՝ մշակման ենթակա հողի սակավության աստիճանը երեխաներին հասկանալի ու մատչելի բացատրելու համար կարելի է օգտագործել «Այս խնձորը Երկիրն է» վարժությունը:

Վերցնենք խնձորը և պատկերացնենք, թե այն Երկիրն է: Բաժանենք այն 4 մասի: Դրանցից երեքը այն տարածքներն են, որ զբաղեցնում են օվկիանոսները: Այդ երեք մասը դնենք մի կողմ: Մնացած մեկ կտորը կիսենք: Մի կտորը դնենք մի կողմ: Դա բնակության համար ոչ պիտանի ցամաքն է՝ բևեռային գոտիներ, անապատներ, ձախիճներ, ժայռոտ վայրեր և այլն: Մեր ձեռքին մնացած փոքրիկ շերտիկը այն տարածքներն են, որտեղ մարդիկ են բնակվում, սակայն այդ հողերն ամբողջությամբ չեն մշակվում: Մնացած այդ փոքրիկ շերտիկը կրկին բաժանենք 4 մասի: Դրանցից 3-ը դնենք մի կողմ, որովհետև այդ տարածքները զբաղեցնում են քաղաքները, խճուղիները, գործարանները և այլն, այս տարածքները ևս չեն մշակվում: Հիմա վերցնենք մնացած փոքրիկ կտորը և կեղևենք: Կեղևի այս բարակ շերտիկը Երկրի մակերևույթի այն մասն է, որը մարդը մշակում է և այս փոքրիկ շերտիկի վրա

աճեցված բերքն է սնուն մեզ: Ահա թե ինչու է կարևոր հոգատար ու խնայողաբար վերաբերվել հողի յուրաքանչյուր պատառիկին:

Ինչ են թթվային անձրևները և ինչպես են դրանք վնասում բույսերին կարելի է բացատրել մատչելի փորձի միջոցով: Մեկանգամյա 3 բաժակների մեջ տնկում ենք բույսեր, ապա այդ բույսերը ոռոգելու համար պատրաստում ենք երեք տիպի ջուր՝ մաքուր ջուր, թույլ թթու(ջուր և մի քիչ քացախ), ուժեղ թթու(քացախ և մի քիչ ջուր): Մի քանի օրվա ընթացքում բույսերը ջրում ենք այդ 3 տիպի ջրով: Դիտարկումներն ու արդյունքները գրի են առնում և համեմատում ուրբնարկում դասընկերների հետ, կատարում եզրահանգումներ:

Ինչպես է փոխվում կենդանիների վիճակը մարդու գործունեության ընթացքում կարելի է ակնառու դարձնել խաղի միջոցով: Բակում կավիճով երեք շրջան է նկարվում: Դա Երկրի տարածքն է համարվում: Երեխաները դասվորվում են այդ երեք շրջաններում որպես երկրի կենդանիներ: Ապա ուսուցիչը հրահանգում է, որ շրջանի կենտրոնական հատվածում քաղաք է կառուցվելու և կենդանիները պետք է ազատեն այն և տեղավորվեն մյուս երկու շրջաններում: Ապա հրահանգում է, որ երկրորդ շրջանում գործարաններ ու ճանապարհներ են կառուցվելու և բոլորը պետք է տեղավորվեն արտաքին շրջանում:

Աղբը և թափոնները էկոլոգիական մեծագույն աղետներից են ամբողջ աշխարհում: Ջարգացած երկրներում այս իրավիճակը թեթևացնելու համար կառուցվում են աղբի վերամշակման գործարաններ, և աղբը տեսակավորվում է: Մեր երկրում էլ գոծում է նմանատիպ գործարան, սակայն բնակչության մեծ մասը տեղյակ չէ դրա մասին:

Քայքայվող և չքայքայվող՝ բնությունն աղտոտող, աղբը տարբերակելու և ավելի ակնառու դարձնելու համար կարելի է երեխաների հետ կատարել հետևյալ փորձը.

1. Վերցնել խնձորի մնացորդներ, կարտոֆիլի կեղև, պոլիէթիլենի տոպրակ, պլաստիկ շիշ, ապակու կտորներ:
2. Բակում փորել հինգ փոս՝ 4-5 սմ խորությամբ:
3. Վերցրած առարկաները թաղել առանձին-առանձին՝ յուրաքանչյուրը մի փոսում:
4. Ամեն փոսի վրա դնել համապատասխան առարկայի անվանումով ցուցանակ:
5. Մի քանի շաբաթ անց քանդել փոսերը և տեսնել, թե ինչ վիճակում են թաղված առարկաները:

Փորձի արդյունքում երեխաները տեսնում և համոզվում են, որ խնձորի մնացորդներն ու կարտոֆիլի կեղևը քայքայվել են, իսկ պոլիէթիլենի տոպրակը, պլաստիկ շիշը, ապակու կտորները պահպանվել են նույնությամբ:












Որպեսզի այս մնացորդները չվերածվեն էկոլոգիական աղետի, անհրաժեշտ է իրականացնել դրանց վերամշակում կամ երկրորդական օգտագործում: Օրինակ՝ պլաստիկ շշերից կարելի է պատրաստել կերակրամաններ թռչունների համար կամ լցնել հողով և ծաղիկներ աճեցնել դրանց մեջ, կտորված ապակիներից կարելի է պատրաստել գունավոր խճանկարներ, հին անվադողերից կարելի է պատրաստել ճոճանակ կամ օգտագործել այգու ձևավորման համար և այլն:



Նամանատիպ աշխատանքները երեխաները կատարում են մեծ հաճույքով և մինչև որևէ իր նետելը մտածում են, թե որտեղ կարելի է այն օգտագործել:

Բնապահպանական վերաբերմունք ձևավորելու նպատակով կարելի է պատրաստել բնապահպանական օրացույց և այդ օրերին իրականացնել փոքրիկ բնապահպանական ակցիաներ:

**Բնապահպանական օրացույց**

Ամիսը/օրը	Բնապահպանականօրեր	
Մարտի 3	Վայրի բնության համաշխարհային օր	
Մարտի 21	Անտառների միջազգային օր	
Մարտի 30	Երկրի ժամ	
Ապրիլի 1	Թռչունների միջազգային օր	
Ապրիլի 22	Երկրի միջազգային օր	
Հունիսի 5	Շրջակա միջավայրի պահպանության օր	
Օգոստոսի վերջին կիրակին	Սևանա լճի օր	
Սեպտեմբերի 16	Օզոնային շերտի պահպանության միջազգային օր	
Սեպտեմբերի 21	Համաշխարհային ակցիայի շաբաթ՝ մաքրենք Երկիրն աղբից	
Հոկտեմբերի 4	Կենդանիների միջազգային օր	
Նոյեմբերի 15	Երկրորդական վերամշակման օր	

Այսպիսի օրացույց կարելի է պատրաստել տարեսկզբին, կախել դասարանում և յուրաքանչյուր օրվան համապատասխան իրականացնել որևէ բնապահպանական ակցիա՝

- ծառեր ու ծաղիկներ տնկել դպրոցի բակում,
- 1 ժամով անջատել բնակարանի էլեկտրական սարքերը,
- աղբից մաքրել դպրոցի շրջակայքը,
- կերակրամաններ պատրաստել,
- չբայքայվող աղբը երկրորդական վերամշակման ենթարկել,
- իրականացնել բնապահպանական նախագծեր,
- կազմակերպել էքսկուրսիաներ,
- դիտել բնապահպանական ֆիլմեր ու մուլտֆիլմեր՝

Երկրի

օզոնային

շերտի

մասին՝ <https://www.youtube.com/watch?v=O8D6x91jTJ0>

երկրագնդի գլոբալ տաքացում՝ [https://www.youtube.com/watch?v=gIFLCoqn-](https://www.youtube.com/watch?v=gIFLCoqn-k8)

k8

«Փրկիրքո մոլորակը» (մարդու գործունեության ազդեցությունը՝ երկրագնդի բնության վատթարացման պատճառ)՝ <https://www.youtube.com/watch?v=9IJ-xXLrL3s>

«Խնայենք էներգիան»՝ <https://www.youtube.com/watch?v=1-g73ty9v04>

Արդյունաբերական գործարանների ազդեցությունը բնության

վրա` <https://www.youtube.com/watch?v=UY8ZwQnmPaw>

«Տղան և երկիրը»` <https://www.youtube.com/watch?v=EEdn6iqjEXo>

«Պահպանենք բնությունը»` <https://www.youtube.com/watch?v=N2dVBUHFwk0>

«Պահպանենք բնությունը»` <https://www.youtube.com/watch?v=XXBJfbRmXZw>

«Աղբե հրեշը»` <https://www.youtube.com/watch?v=kBIDXQxQbV4>

«Աղբը»` <https://www.youtube.com/watch?v=hV2RLGHYZDk>

«Կանաչ եղբայրը» (անտառահատման խնդիրը)` [https://www.youtube.com/watch?v=yV\\_DdyBdwoA](https://www.youtube.com/watch?v=yV_DdyBdwoA)

Այսպիսով, էկոլոգիական կրթության գործընթացը պետք է ներառի հենքային դասընթացը, որը էկոլոգիական գիտելիքների ձեռքբերման հիմք է ստեղծում, էկոլոգիական թեմաներին նվիրված զարգացնող խաղեր ու փորձեր, տեսաֆիլմերի դիտում, ճանաչողական, երկրագիտական էքսկուրսիաներ, նախագծեր, բնապահպանական թեմաներով արտասուսումնական եւ համադպրոցական միջոցառումներ:

Բազմաբնույթ մեթոդների կիրառումը էկոլոգիական կրթության գործընթացում կարող է շոշափելի արդյունք տալ, եթե ապահովվեն հետևյալ պայմանները`

- մեթոդների ու ուսուցման միջոցների ճիշտընտրություն
- դպրոցականների էկոլոգիական գործունեության գնահատման օբյեկտիվություն,
- համակարգվածություն,
- դաստիարակչական եւ ուսուցողական ուղղվածություն,
- կրտսեր դպրոցականների`էկոլոգիականուղղվածությամբ ինքնուրույն աշխատանքների իրականացում:

Եվ ինչպես ասվում է չինական ասացվածքում` ասա ինձ, և ես կմոռանամ, ցույց տուր, և ես կհիշեմ, մասնակից դարձրու, և ես կսովորեմ:

Բնապահպանական ուսուցումը տարրական դասարաններում անհրաժեշտ է կազմակերպել հենց այս սկզբունքով:

## Եզրակացություն

Բնությունը կատակներ չի ճանաչում, նա միշտ արդարացի է,  
Միշտ լուրջ է, միշտ խիստ է, նա միշտ ճշմարտացի է,  
Սխալները և մոլորությունները մարդկանցից են բխում:  
Գյոթե

Յուրաքանչյուր մարդ պատասխանատվություն է կրում բնության պահպանման համար, քանի որ ամեն մեկը իր հնարավորությունների և ուժերի սահմաններում կարող է աջակցել բնության թեկուզ շատ աննշան մի անկյան պահպանմանը և բազմացմանը: Վերջին հաշվով մարդկանց անհատական ջանքերի գումարից է կախված բնության պահպանումը և մարդու գոյության համար բնական միջավայրի ապահովումը: Նվաճելով բնությունը մարդը պետք է ամեն կերպ ձգտի ոչ թե ոչնչացնել բնությունը, այլ՝ լիակատար ներդաշնակության մեջ մտնել բնության հետ: Սա ապահովելու համար կարևոր է բնապահպանական գիտելիքներով, երկրի պահպանությամբ մտահոգված, նոր մտածելակերպով մարդու կայացման խնդիրը: Երկիրը պահպանելու խնդիրը պետք է լինի յուրաքանչյուր բնակչի մտածելակերպ ու ապրելաոճ:

Սակայն այս ամենի գիտակցումը միանգամից չի ձևավորվում: Բնապահպանական վերաբերմունքը ձևավորվում է դեռևս մանկական տարիքից իրականացվող համակարգված և հետևողական աշխատանքի շնորհիվ:

Տարրական դասարաններում էկոլոգիական թեմաներ հնչում են մայրենիի դասաժամերին ուսումնասիրվող տեքստերում, մաթեմատիկայի խնդիրներում, կերպարվեստի առաջադրանքներում, երգերում, սակայն բնագիտական, բնապահպանական վերաբերմունքի ձևավորումը մեծապես իրականացվում է «Ես և շրջակա աշխարհը» առարկայի միջոցով (բնապահպանական թեմաները հիմնականում ընդգրկված են 4-րդ դասարանի ծրագրում):

Բնության ուսումնասիրությունը տարրական դասարաններում պետք է սկսել էքսկուրսիաներից և շարունակել դասերի ու արտադասարանական միջոցառումների ժամանակ: Յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրման ժամանակ պետք է կապ ստեղծել մեր ժամանակներում և մեր հանրապետությունում առկա էկոլոգիական



խնդիրների միջև: Բնապահպանական վերաբերմունքի ձևավորումը այս տարիքում պետք է իրականացնել հետաքրքրաշարժ, աշխույժ մեթոդների, դիդակտիկ, շարժուն խաղերի, փորձերի միջոցով, որը հնարավորություն է տալիս դաստիարակել փոքրիկ բնապահպաններ: Այդպարագայում դասերը ցուցադրական-որոնողական բնույթ կրեն և ավելի գրավիչ ու հետաքրքիր կլինեն կրտսեր դպրոցականների համար:

Անհրաժեշտ է որքան հնարավոր է հաճախասերնանց կացնել բնության գրկում և դրանց տալ գործնական բնույթ, ինչի արդյունքում երեխաները ավելի սիրով կմասնակցեն դասերին, կսովորեն բնության մեջ վարքի տարրական կանոններ և կսովորեն գեղեցիկը տեսնել իրենց շրջապատում: Սակայն նրանց ոչ միայն հարկավոր է տեսնել դրանք, այլև ցույց տալ իրենց վերաբերմունքը այդ ամենի նկատմամբ՝ որպես բնության հետ հաղորդակցվելու ինչ-որ արդյունք՝ հարցեր տալ, նկարել, նկարագրել:

Դասերի ժամանակ տարվող աշխատանքը պետք է իր արտացոլումը գտնի առօրյա կյանքում, արտասուսումնական միջոցառումներում՝ բնական նյութերի ցածր քիաշխատանքների, բնության մասին նկարների, բերքի, ծաղկի տոներ եւ այլն:

## Օգտագործված գրականություն

1. Տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշիչ և ծրագիր (2-4-րդ դասարաններ)
2. Լ. Ասատրյան, Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները, Երևան 2006թ.
3. Լ. Ալեքսանյան, Ն. Թորոսյան, «Ես և շրջակա աշխարհը 4», Երևան 2009թ.
4. Ա. Հովսեփյան, Գ.Հովհաննիսյան, Ն. Տողանյան, Լ. Ավագյան, «Ես և շրջակա աշխարհը 4», Երևան 2015թ.
5. Ա. Հովսեփյան, Գ.Հովհաննիսյան, Ն. Տողանյան, Լ. Ավագյան, «Ես և շրջակա աշխարհը 2», Երևան 2014թ.
6. «Նախաավիղ» գիտամեթոդական հանդես, 2-3.2008